ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև

Կարևորելով Հայոց պետականության զարգացման և ամրապնդման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ու նշանակությունը, նաև նկատի ունենալով հայ ժողովրդի հոգևոր, կրթամշակութային կյանքում և ազգապահպանման գործում նրա ունեցած բացառիկ նշանակությունը և նպատակ ունենալով հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների դասարաններում իրականացնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության դասավանդումը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը մի կողմից՝ հանձին ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի և մյուս կողմից Հայաստանայայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հանձին Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի (այսուհետև՝ կողմերը) որոշեցին կնքել Համաձայնագիրը և պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. Կողմերն անհրաժեշտ են համարում իրականացնել հետևյալ աշխատանքները.

Մշակել առարկայական չափորոշիչներ, ծրագրեր, հրատարակել դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ, կազմակերպել առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ։

2002թ. սեպտեմբերից մինչև 2004թ. սեպտեմբերի 1-ը, աստիճանաբար, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության առարկան մտցնել հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների դասարանների ուսումնական պլան։

Հանձնարարել Կրթության և գիտության նախարարությանը և Մայր Աթոռի ՔԴԿ-ին՝ հնգօրյա ժամկետում ներկայացնել վերոհիշյալ աշխատանքների իրականացման ժամանակացույցը։

2. Կողմերը համաձայնում են.

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ապահովում է նշյալ ժամանակաշրջանում դասագրքերի մշակումը և ֆինանսավորումը, իրականացնում դասագրքերի հրատարակումը։

Կրթության և գիտության նախարարությունն իրականացանում է առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների ստեղծման աշխատանքների գիտամեթոդական ղեկավարումը, լրամշակման աշխատանքների կազմակերպումը, փորձնական աշխատանքների գնահատումը, մասնակցում ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, հաստատում դասագրքերը և առարկան մտցնում ուսումնական պլան։

3. Համաձայնագրի կատարման պատասխանատուները.

ՀՀ կառավարության կողմից համաձայնագրի կատարման պատասխանատուն է ՀՀ կրթության և գիտության նախարարը։

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից համաձայնագրի կատարման պատասխանատուն է ՔԴԿ-ի խորհրդի նախագահ, Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը։

4. Եզրափակիչ դրույթներ.

Սույն Համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ հայերեն լեզվով և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից։

22-ը օգոստոսի 2002թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ